ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ«ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԹԵՄԱՅԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ՝ Աբրոյան Գարիկ
ԴՊՐՈՑ՝ Վարդենիկի Ռ.Հովհաննիսյանի անվան N1 հիմնական դպրոց

Բովանդակություն

1.Նախաբան.....3
2. Գրականության ակնարկ..... 4
3. Գործնական համատեքստ..... 6
3.1. Խմբի նկարագիրը 6
3.2. Փորձարարական մաս 7
3.3. Փորձարարական դասեր 8
3.3.1. Փորձարարական դաս-1 8
3.3.2 Փորձարարական դաս-2 9
4.Վերլուծություն 9
5. Եզրակացություն 11
6.Գրականության ցանկ 12
7. Հավելված 13
1. Դասապլան-1 13
2. Դասապլան-2 19

1.Նախաբան

Սովորողների գիտելիքների խթանման և կրթական պրոցեսներին նրանց առավել մեծ չափով ներգրավվման համար ներկայումս կատարվում, մշակվում և բարելավվում են դասավանդման տարբեր եղանակներ, որոնք տարբեր

դասարաններում ունենում են տարբեր արդյունքներ՝ կախված տարիքային, քանակական և այլ առանձնահատկություններից:
Գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն կրթության անցումը կրթական պրոցեսներում ավելի ու ավելի կարևոր է դարձնելու սովորողների մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացման ուղղվածությունը: Սկսած դեռևս նախադպրոցական կրթությունից փորձ է արվում սովորողների մոտ զարգացնել այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են տրամաբանությունը, հիշողությունը, վերլուծելու և ընկալելու ունակությունները, քայլերը ծրագրելու, որոշումներ կայացնելու և դրանք իրագործելու հմտությունները և այլն:
Վերջիններս զարգացնելու համար լավագույն տարիքը թերևս համարվում է վաղ դպրոցական շրջանը և պատահական չէ, որ հենց այստեղ՝ տարրական դպրոցում են մեծ ծավալով իրագործվում սովորողների զարգացմանն ուղղված կրթական ծրագրերը:
Այս համատեքստում իր կարևոր դերն ունի «շախմատ» ուսումնական առարկան, որը դեռ վաղ տարիքից մեծ հնարավորություններ է ընձեռնում սովորողների մոտ զարգացնել վերը թվարկած հատկանիշները և հմտությունները: Կարևոր է սակայն կրթական պրոցեսում գործածել դասավանդման այնպիսի եղանակներ, որոնք առավել դյուրին կդարձնեն դասավանդվող նյութի յուրացումը և սովորողին հնարավորություն կտան առավել մեծ չափով օգտվել առարկայի տված առավելություններից: Եվ հենց այդ եղանակների որոնման նպատակով էլ կատարեցի հետազոտական աշխատանք, որոշելու համար թե որքանո՞վ են խմբային աշխատանքները նպաստում նյութի հեշտ յուրացմանն ու դասապրոցեսին երեխաների ակտիվ ներգրավվածությանը:

2.Գրականության ակնարկ

Համագործակցային ուսուցում, խմբային աշխատանք.
Խմբային աշխատանքն ուսուցման մի ձև է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու:
Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը: *

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

* (Johnson,D. W., Johnson, R. T., & Holubec, E. (2008) “Cooperation in the classroom" (8th ed.). Edina, MN: Interaction Book Company.)

1920 թ. **Կուզինեն մի շարք ուսուցիչ կամավորների հետ մշակեց ազատ խմբային աշխատանքի մեթոդը**, որի էությունը աշակերտների ամբողջական ազատությունն էր և ճանաչողական գործունեությունը: Ըստ այդմ, աշակերտները դասարանում բաժանվում են խմբերի և ընտրում նախապես հայտնի զբաղմունքներից կամ ուսումնական թեմաներից որևէ մեկը, իսկ ուսուցիչը միայն հետևում է խմբի աշխատանքին, անհրաժեշտության դեպքում խորհուրդներ տալիս և ստուգում նրանց աշխատանքի արդյունքները: Կուզինեն տարբերակում էր դասավանդումը և ուսուցումը: Նրա մեթոդը թույլ էր տալիս երեխաներին ապրել, շփվել, աշխատել խմբում, զարգացնել նպատակասլացություն, համբերություն և նախաձեռնողականություն:
Խմբային աշխատանքի մեթոդը ներառում էր հետևյալ տարրերը. Առարկաների հետազոտում, նյութերի ուսումնասիրություն և ստացված

արդյունքների գրանցում խմբի գրատախտակի վրա:

Աշխատանքի արդյունքը ցույց է տրվում ուսուցչին: Ստուգելով աշխատանքը՝ նա առաջնորդվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝ սկզբում ասում է, որ տեքստում կան ուղղագրական (կամ այլ քերականական) սխալներ, հանձնարարում ինքնուրույն գտնել և ուղղել դրանք, ապա անհրաժեշտության դեպքում կրկին ստուգում է տեքստը՝ այս անգամ ընդգծելով քերականական սխալները, այնուհետև, դարձյալ անհրաժեշտության դեպքում, հենց ինքն է սխալներն ուղղում առանց բացատրություն տալու (եթե, իհարկե, երեխաներն իրենք չխնդրեն):
Աշխատանքը արտագրում են խմբի տետրի մեջ, և եթե կարիքը կա, կրկին ցույց տալիս ուսուցչին: Կատարված աշխատանքը դասակարգվում է հատուկ քարտերի վրա:
«Իմ մեթոդը թույլ է տալիս երեխաներին սովորել բառիս բուն իմաստով, այլ ոչ թե լինել սովորեցվողի դերում»: Ռ. Կուզինե *

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ:
Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է `
1.խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2.պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3.բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4.յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

*(**http://hy.armscoop.com/2016/09/5-fam...tional-system/**)

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝

նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

3.Գործնական համատեքստ

3.1 Խմբի նկարագիրը

Հետազոտական աշխատանքս կատարել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի 4-րդ դասարանում:
Այս դասարանում սովորում են 11 աշակերտ՝ 8 տղա և 3 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ: Ճախմատ անցնում են շաբաթական 2 ժամով և փորձարարական դասերը անցկացրեցի հենց նույն շաբաթում՝ 2 անգամ:
Խմբային աշխատանքին մասնակցեցին բոլոր 11 աշակերտները:

Նրանցից 3-ը ունեն գերազանց առաջադիմություն,ինքնուրույն կատարում են գրեթե բոլոր առաջադրանքները, վարում են գրագետ խաղ, և արդեն իսկ հասցրել են նվաճել մարզական կարգեր և մի շարք մրցաշարերում՝ գրավել մրցանակային տեղեր: Նրանց տանք պայմանական՝ Ա1, Ա2, Ա3 անունները:
Աշակերտներից 5-ը ունեն միջին և միջինից բարձր առաջադիմություն, կատարում են պարզ և միջին բարդության առաջադրանքները և կարողանում են շախմատային խաղ անցկացնել, պահպանելով խաղի կանոնները: Նրանց տանք Բ1, Բ2, Բ3, Բ4, Բ5 պայմանական անունները:
3 աշակերտ ունեն միջինից ցածր և թույլ առաջադիմություն: Դժվարությամբ են լուծում պարզագույն առաջադրանքները, առարկայի մասին ունեն պարզ գիտելիքներ միայն և խաղը վարելիս հաճախակի թույլ են տալիս կանոնների խախտում: Նրանց էլ պայմանականորեն անվանենք՝ Գ1, Գ2, Գ3:

3.2 Փորձարարական մաս

Իմ հետազոտության ընդհանուր նպատակն է խմբային աշխատանքի միջոցով բարձրացնել աշակերտների առաջադիմությունը և դասապրոցեսին նրանց ներգրավվածությունը, քանի որ որոշ աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին համարում էի ոչ բավարար: Խմբային աշխատանքի եղանակը, ըստ իս, պիտի լուծեր աշակերտների դասին ներգրավվածության խնդիրը և դրդեր նրանց աշխատանքի, քանի որ այս եղանակով կատարված աշխատանքի արդյունքում նրանց թույլ տված բացթողումները ազդելու էին ոչ միայն իրենց վրա, այլ նաև բացասաբար էր ազդելու ընդհանուր թիմի արդյունքի վրա:
Հաշվի առնելով վերը նշված խնդիրները,և այն, որ աշակերտներն ունեին տարբեր առաջադիմություն ու գիտելիքներ,բնականաբար, չէր կարող հետազոտական աշխատանքը բոլոր աշակերտների համար ունենալ միևնույն նպատակը: Ուստի հետազոտական աշխատանքը իրականացնելիս որոշեցի սահմանել մի քանի

առանձին նպատակներ, որի պատասխանները ստանալով էլ պիտի համարեի հետազոտական աշխատանքը արդյունավետ կամ՝ ոչ:

Այսպիսով. հետազոտական աշխատանքի առանձին նպատակներն էին.

1. Գ1, Գ2 և Գ3 աշակերտների մոտ ստուգել առաջադիմության և ներգրավվածության բարձրացման արդյունավետությունը:
2. Բ1, Բ2, Բ3, Բ4 և Բ5 աշակերտների մոտ բացի առաջադիմության և ներգրավվածության ավելացման աստիճանը, ստուգել նաև խմբում նրանց ինքնադրսևորման մակարդակը, հաշվի առնելով, որ նրանք աշխատելու էին իրենցից թույլ և ուժեղ առաջադիմություն ունեցող աշակերտների հետ:
3. Ա1, Ա2 և Ա3 աշակերտների մոտ ստուգել առաջնորդի հատկությունների դրսևորումները և խմբի աշխատանքները համակարգելու հմտությունները: Ինչպես նաև ստուգել, թե

3. գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ խմբային աշխատանքները կարո՞ղ են նպաստել ինքնավստահության բարձրացման, թե՞ ոչ:

3.3 Փորձարարական դասեր

3.3.1 Փորձարարական դաս-1

«Մատ վերջին հորիզոնականում» թեման աշակերտներին ծանոթ էր դեռ նախորդ տարիներից: Տարբեր հարցադրումների միջոցով նախ աշակերտների հետ վերհիշեցինք թեման, նրա առանձնահատկությունները և լուծման սկզբունքները: Աշակերտների օգնությամբ լուծեցինք 3 խնդիր, որոնք ունեին բարդության տարբեր աստիճաններ: Խնդիրները լուծելիս առավել ակտիվ էին գերազանց սովորող աշակերտները, սակայն փորձ արվեց հնարավորինս աշխատանքներին մասնակից դարձնել նաև մյուս աշակերտներին, որպեսզի խմբային աշխատանքներում նրանք ևս ունենան անմիջական մասնակցություն: Այնուհետև անցում կատարվեց փորձարարական մասին: Դասին ներկա էին բոլոր 11 աշակերտները: Ստեղծվեց 3 խումբ, որոնց իրենց իսկ ցանկությամբ տրվեց՝ Կարմիր, Կապույտ և Նարնջագույն անունները: Խմբերը կազմվեցին խիստ հետևողականորեն, անյպես, որ նրանց ուժերը լինեն հնարավորինս հավասար, որպեսզի ապահովվի հավասար մրցակցային սկզբունքը:

Այսպիսով՝ խմբերը ձևավորվեցին աշակերտական հետևյալ կազմով՝
Կարմիր խումբ - Ա1, Բ1, Բ2, Գ1

Կապույտ խումբ - Ա2, Բ3, Բ4, Գ2
Նարնջագույն խումբ - Ա3, Բ5, Գ3

Խմբերին բաժանվեց նախապես կազմված առաջադրանքների թերթիկները, բացատրվեց առաջադրանքների իմաստը: Աշակերտներին արագ կերպով բացատրվեց նաև խմբային աշխատանքի սկզբունքները, նպատակը և մասնակիցների վարքային կանոնների պահպանության անհրաժեշտությունը: Խմբերին տրվեց 20 րոպե ժամանակ առաջադրանքը կատարելու և այն ներկայացնելու պատրաստության համար: Մինչ աշակերտները կատարում էին աշխատանքը, մանրազնին կերպով դիտարկվեց և գրի առնվեց նրանցից յուրաքանչյուրի՝ ուշադրության արժանի գործողությունները:
Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացրին իրենց աշխատանքը: Հարցադրումների միջոցով աշխատանքի ներկայացմանը մասնակից դարձվեցին խմբի բոլոր անդամները: Այնուհետև խմբերին ներկայացվեցին իրենց աշխատանքային թերացումները, որոնք պետք է շտկվեին հաջորդ աշխատանքների ժամանակ:
Տնային աշխատանքը հանձնարարվեց տարբերակված եղանակով: Աշակերտներին բաժանվեցին նախորոք պատրաստված աշխատանքային թերթիկները, յուրաքանչյուրին՝ ըստ իրենց կարողություններին համապատասխան, որպեսզի հետադարձ կապը ապահովվի ավելի արդյունավետ:

3.3.2 Փորձարարական դաս-2

Հաջորդ ժամին կատարվեց 2-րդ փորձարարական դասը: Դասի սկզբում նախ կատարվեց տնային աշխատանքների վերլուծություն, աշակերտներին բացատրվեց անհասկանալի խնդիրները, տրվեց դրանց լուծումները: Այնուհետև անցում կատարվեց նոր թեմայի: Աշակերտներին բացատրվեց «Թագուհին ծուղակում» թեման, դրա առանձնահատկությունները, խնդիրների լուծման սկզբունքները, եղանակները և այլն:
Հարցադրումների միջոցով՝ աշակերտների մասնակցությամբ, լուծվեց 2 առաջադրանք, որոնց միջոցով աշակերտների մոտ ձևավորվեց խնդիրների լուծման եղանակների մասին պատկերացում:

Այնուհետև աշակերտները կրկին բաժանվեցին խմբերի: Որոշվեց խմբերի կազմը նախորդ դասի համեմատ փոփոխության չենթարկել: Բացառություն էր միայն Բ4 աշակերտը, որը այդ օրը բացակայում էր: Աշակերտներին կրկին բաժանվեց նախօրոք կազմված թերթիկներ, որոնցում ներկայացված էր առաջադրանք՝ Թագուհին ծուղակում թեմայի վերաբերյալ: Այս անգամ աշակերտներին տրվեց 15 րոպե ժամանակ, քանի որ առաջադրանքը ավելի պարզ էր:
Աշխատանքներին զուգահեռ կրկին կատարվեցին նշումներ՝ աշակերտների աշխատանքի վերաբերյալ: Այնուհետև խմբերի ներկայացրին իրենց կատարած աշխատանքը և կատարվեց ամփոփում: Աշակերտների հետ քննարկվեցին խմբային աշխատանքի հետ կապված հարցեր և փոխանակվեցին կարծիքներ:
Այնուհետև հանձնարարվեց տնային առաջադրանք՝ կրկին տարբերակված եղանակով: Աշակերտներին բաժանվեց Թագուհին ծուղակում թեմայով նախօրոք կազմված առաջադրանքների թերթիկը, յուրաքանչուրին՝ իր կարողություններին համապատասխան:

4.Վերլուծություն

Աշակերտների առաջադիմության և դասի ներգրավվածության բարձրացման համար անցկացվեց 2 փորձարարական դաս, որտեղ նրանք կատարեցին 2 խմբային աշխատանք: Բացի այդ տանը նրանք կատարեցին հատուկ առաջադրանքներ, յուրաքանչյուրը՝ իր կարողություններին համապատասխան: Խմբային աշխատանքների ընթացքի, տնային աշխատանքների կատարման և դասի յուրացվածության առումով յուրաքանչյուր աշակերտի համար կազմվեց վերլուծություն՝ հասկանալու համար խմբային աշխատանքների արդյունավետության աստիճանը: Արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը.

Ա1 աշակերտը ցուցաբերեց մեծ ակտիվություն և ճիշտ կատարեց բոլոր առաջադրանքները: Առաջին խմբային աշխատանքի ժամանակ նա առավել շատ փորձում էր խմբի աշխատանքները վերցնել իր վրա և աշխատանքների մեծ մասը կատարել ինքնուրույն, սակայն բացատրական աշխատանքից հետո, արդեն իսկ 2-րդ աշխատանքի ժամանակ ավելի շատ փորձեց համակարգել խմբի աշխատանքները և ներգրավվել խմբի մյուս անդամներին, օգնելով նրանց հասկանալու իրենց անելիքները:
Բ1 աշակերտը փորձ էր անում ակտիվորեն մասնակցել աշխատանքներին և օգնել իր թիմին: Խմբի հետ աշխատանքը օգնեց նրան յուրացնել թեմաները և ըստ այդմ ճիշտ կատարել տնային հանձնարարությունների մեծ մասը: Խմբին ուղղված հարցերի ժամանակ 2 անգամ ցանկություն հայտնեց ինքնուրույն պատասխանել հարցերին:
Բ2 աշակերտը առաջին խմբային աշխատանքի սկզբում ցուցաբերեց որոշակի պասիվություն, սակայն ընթացքում ավելի ակտիվացավ և աշխատանքը ներկայացնելիս ցուցաբերեց բավական մեծ մասնակցություն: Տնային առաջադրանքները կատարելիս ցուցաբերեց 75% ճշտություն, ինչը ավելին էր, քան սովորաբար նա կատարում էր:

Գ1 աշակերտի համար խմբային աշխատանքը հետաքրքիր էր: Հասկանալով, որ ինքը թիմի մի մասնիկն է, փորձում էր հնարավորինս շատ բան սովորել, որպեսզի օգտակար լիներ թիմին: Արդյունքում ցուցաբերեց բավական մեծ ներգրավվածություն, ինչը ոչ միշտ կարելի էր տեսնել դասերի ընթացքում: Թիմակիցների օգնությամբ լուծեց 1 խնդիր:

Ա2 աշակերտը դրսևորեց իրեն ինչպես իրական առաջնորդի: Ամբողջ ընթացքում համակարգելով թիմակիցների աշխատանքը և օգնելով նրանց, կարողացավ հասնել նրան, որ խմբակիցները բավական լավ յուրացրին թեման: Արդյունքում խումբը բավական լավ ներկայացավ, ինչի շնորհիիվ Ա2 աշակերտի մոտ նկատվեց բավական մեծ ոգևորվածություն:

Բ3 աշակերտի մոտ ամենից ակնհայտը թերևս վարքային փոփոխությունն էր: Իր տեսակով, լինելով շատ աշխույժ աշակերտ, երբեմն շեղվում է դասի ընթացքից, սակայն խմբային աշխատանքների ամբողջ ընթացքում հետաքրքրությամբ մասնակցեց աշխատանքներին:

Բ4 աշակերտը մասնակցեց միայն առաջին խմբային աշխատանքին և ցուցաբերեց որոշակի ակտիվություն: Առաջադրանքը ներկայացնելուց ևս ունեցավ իր մասնակցությունը:

Գ2 աշակերի մոտ առաջադիմության մասով որևէ լուրջ փոփոխություն չեղավ, սակայն դասի ներգրավվածության առումով որոշակի առաջընթաց նկատվեց:

Ա3 աշակերտը ևս շատ արագ յուրացրեց նյութը և զբաղվեց աշխատանքների համակարգմամբ: Նրա մոտ ևս նկատվեց առաջնորդի հատկանիշներ: Տնային աշխատանքները կատարել էր առանց որևէ էական սխալների:

Բ5 աշակերտի մոտ բավական մեծ առաջընթաց նկատվեց, թե՛ առաջադիմության մասով, թե՛ դասի ներգրավվածության: Խմբային աշխատանքը ևս մեկ անգամ փաստեց, որ նա ունի մեծ պոտենցիալ, որը պետք է օգտագործել: Արդյունքում նրա մոտ նկատվեց ինքնագնահատականի բարձրացում և մեծ ոգևորություն:

Գ3 աշակերտը ևս ներգրավվեց աշխատանքներին, և փորձեց իր մասնակցությունն ունենալ խմբի հաջողության գործում: Ոգևորիչ էր հատկապես այն, որ տնային առաջադրանքներից մեկը կարողացել էր ինքնուրույն ճիշտ լուծել:

5. Եզրակացություն

Վերլուծելով երկու փորձարարական դասերի արդյունքները, կատարված խմբային աշխատանքներն ու տնային հանձնարարությունների կատարման արդյունքները՝ եկա այն եզրակացության, որ.

1. Խմբային աշխատանքերը գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ խթանում են լրացուցիչ կերպով ինքնագնահատականի բարձրացմանը և առաջնորդի հատկությունների դրսևորմանը:

2. Միջին և միջինից բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների մոտ խմբային աշխատանքներ կատարելիս ի հայտ է գալիս սեփական ուժերի նկատմամբ վստահություն և նկատվում է դասապրոցեսին ներգրավվածության աճ: Որոշ աշակերտների մոտ նաև ակնհայտորեն դրսևորվում է առաջադիմության որոշակի աճ, ինչը կարելի է կապել աշխատանքի ներգրավվածության ավելացման հետ:
3. Ցածր առաջադիմություն ունեցողների մոտ խմբային աշխատանքը էականորեն ավելացնում է դասապրոցեսին ներգրավվածության աստիճանը, սակայն առաջադիմության մասով ոչ միշտ է նկատվում դրական առաջընթաց: Կարելի է ենթադրել, որ առավել հաճախ և վաղ շրջանում կատարվող խմբային աշխատանքները կարող են նպաստել նաև այս աշակերտների մոտ առաջադիմության ավելացմանը, քանի որ առաջադիմությունը երբեմն տուժում է դասի ներգրավվածության պակասից, ինչը փաստացի կարգավորում է խմբային աշխատանքը:

6. Գրականության ցանկ

1.Johnson,D. W., Johnson, R. T., & Holubec, E. (2008) “Cooperation in the classroom" (8th ed.). Edina, MN: Interaction Book Company.
2. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon
4. http://ww1.armscoop.com/

7. Հավելված

1.Դասապլան-1

Դաս 34. Մատ վերջին հորիզոնականում

1	**Առարկա, ամսաթիվ**	Շախմատ, 13.03.2023
2	**Դասարանը**	Չորրորդ
3	**Դասի թեման**	Մատ վերջին հորիզոնականում
4	**Դասի նպատակը**	Ուսուցանել մատ վերջին հորիզոնականում թեման:
5	**Դասի խնդիրները**	Սովորողներին ներկայացնել վերջին հորիզոնականների առանձնահատկությունները, բացատրել վերջին հորիզոնականում մատ անելու տեխնիկան: Ուղղորդող հարցերի միջոցով հասնել դասի յուրացմանը:
6	**Դասի վերջնարդյունքը**	Սովորողը կարողանում է ցույց տալ վերջին հորիզոնականները, մատ հայտարարել վերջին հորիզոնականում, և պաշպանվել վերջին հորիզոնականում սպառնացող մատից:
7	**ՀՊՉ կարողությունները**	1,2,6,7
8	**Տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**	S1, S3, S4, S7, S8, S9, S14, S15, S22, S28,
9	**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**	Համակարգ և մոդել Պատճառ և հետևանք
10	**Միջառարկայական կապեր**	Մայրենի, մաթեմատիկա, ՆԶՊ

11	**Ցուցադրական նյութեր և ուսուցման պարագաներ**	Ծախմատի ցուցադրական խաղատախտակ՝խաղաքարերով, գրատախտակ,դասագիրք, վարժությունների տետր:
12	**Դասի փուլերը, ընտրված մեթոդները**	**Դասի սկիզբ-** Տնային հանձնարարությունների ստուգում, Հարց ու պատասխանի միջոցով նախորդ թեմայի վերհիշում և խնդիրների լուծում: **Նոր նյութի ներկայացում-** Հիշեցնել և ուսուցանել մատ վերջին հորիզոնականում թեման: **Խմբային աշխատանք**- Աշակերտները բաժանվելով խմբերի կատարում են հանձնարարությունները: **Ավարտական մաս**- Տնային առաջադրանքների հանձնարարում:

Ուսուցչի գործողությունները	**Աշակերտի գործողությունները**	**Նշումներ եւ բացատրություններ**
Ա) Դասի սկիզբ - (8-10 րոպե)		
Տնային հանձնարարությունների ստուգում, Հարց ու պատասխանի միջոցով նախորդ թեմայի վերհիշում և տնային հանձնարարություններիբացատրություն և լուծում:	Սովորողները լսում են ուսուցչին և դասընկերներին, պատասխանում են ուսուցչի հարցերին: Կատարում են ճշտումներ տնային աշխատանքների մեջ:	
Բ) Նոր նյութի ներկայացում (12-15 րոպե)		
Հիշեցնել և ուսուցանել մատ վերջին հորիզոնականում թեման: Ցուցադրել և բացատրել համապատասխան օրինակները ցուցադրական խաղադաշտին:	Սովորողները լսում են ուսուցչին: Պատասխանում են հարցերին: Որոնում և գտնում են համապատասխան քայլեր:	
Գ) Խմբային աշխատանք (18-20 րոպե)		
Աշակերտներին բաժանել խմբերի և տալ հանձնարարություն: Հետևել աշխատանքների ընթացքին:	Սովորողները մասնակցում են խմբային աշխատանքին, համատեղ ուժերով լուծելով առաջադրանքները և պատրաստվում	Յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է աշխատանքի ներկայացմանը:

	դրանք ներկայացնելու:	
Դ) **Ավարտական մաս (2-4 րոպե)**		
Ամփոփել դասը, հանձնարարել տնային աշխատանք:	Սովորողները լսում և մասնակցում են դասի ամփոփմանը, նշում են տնային հանձնարարությունը:	

Խմբային աշխատանքի հարցաթերթը

Կարմիր խումբ

Բոլոր տրամագրերում քայլը սպիտակներինն է: Լուծե՛լ առաջադրանքները:



Մատ 1 քայլից



Մատ 2 քայլից

Մատ 3 քայլից



Մատ 2 քայլից

Կապույտ խումբ

Բոլոր տրամագրերում քայլը սպիտակներինն է: Լուծե՛լ առաջադրանքները:

Մատ 1 քայլից



Մատ 2 քայլից

Մատ 3 քայլից



Մատ 3 քայլլից

Նարնջագույն խումբ

Բոլոր տրամագրերում քայլը սպիտակներինն է: Լուծե՛լ առաջադրանքները:



Մատ 1 քայլից



Մատ 2 քայլից



Մատ 3 քայլից



Մատ 3 քայլից

2. Դասապլան-2

Դաս 35. Թագուհին ծուղակում

1	**Առարկա, ամսաթիվ**	Շախմատ, 15.03.2023
2	**Դասարանը**	Չորրորդ
3	**Դասի թեման**	Թագուհին ծուղակում
4	**Դասի նպատակը**	Ուսուցանել Թագուհին ծուղակում թեման:
5	**Դասի խնդիրները**	Սովորողներին ներկայացնել Թագուհին ծուղակում թեմայի առանձնահատկությունները, բացատրել թագուհին ծուղակի ենթարկելու և վերցնելու տեխնիկան: Ուղղորդող հարցերի միջոցով հասնել դասի յուրացմանը:
6	**Դասի վերջնարդյունքը**	Սովորողը կարողանում է ցույց տալ թագուհու թուլությունը և ծուղակի մեջ առնելով նրան փոխանակել ավելի թույլ խաղաքարի հետ, ստանալով նյութական առավելություն:
7	**ՀՊՉ կարողությունները**	1,2,6
8	**Տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**	S1, S3, S4, S7, S8, S9, S14, S15, S22
9	**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ**	Համակարգ և մոդել Պատճառ և հետևանք
10	**Միջառարկայական կապեր**	Մայրենի, մաթեմատիկա
11	**Ցուցադրական նյութեր և ուսուցման պարագաներ**	Շախմատի ցուցադրական խաղատախտակ՝խաղաքարերով, գրատախտակ,դասագիրք, վարժությունների տետր:
12	**Դասի փուլերը, ընտրված մեթոդները**	**Դասի սկիզբ-** Տնային հանձնարարությունների ստուգում, Հարց ու պատասխանի միջոցով նախորդ թեմայի վերհիշում և խնդիրների լուծում: **Նոր նյութի ներկայացում-** Ուսուցանել Թագուհին ծուղակում թեման: **Խմբային աշխատանք**- Աշակերտները բաժանվելով խմբերի կատարում են հանձնարարությունները: **Ավարտական մաս**- Տնային առաջադրանքների հանձնարարում:

Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները	Նշումներ եւ բացատրություններ
Ա) Դասի սկիզբ - (8-10 րոպե)		
Տնային հանձնարարությունների ստուգում, Հարց ու պատասխանի միջոցով նախորդ թեմայի վերհիշում և տնային հանձնարարություններիբացատրություն և լուծում:	Սովորողները լսում են ուսուցչին և դասընկերներին, պատասխանում են ուսուցչի հարցերին: Կատարում են ճշտումներ տնային աշխատանքների մեջ:	
Բ) Նոր նյութի ներկայացում (12-15 րոպե)		
Ուսուցանել թագուհին ծուղակում թեման: Ցուցադրել և բացատրել համապատասխան օրինակները ցուցադրական խաղատախտակին:	Սովորողները լսում են ուսուցչին: Պատասխանում են հարցերին: Որոնում և գտնում են համապատասխան քայլեր:	
Գ) Խմբային աշխատանք (18-20 րոպե)		
Աշակերտներին բաժանել խմբերի և տալ հանձնարարություն: Հետևել աշխատանքների ընթացքին:	Սովորողները մասնակցում են խմբային աշխատանքին, համատեղ ուժերով լուծելով առաջադրանքները և պատրաստվում դրանք ներկայացնելու:	Յուրաքանչյուր աշակերտ մասնակցում է աշխատանքի ներկայացմանը:
Դ) Ավարտական մաս (2-4 րոպե)		
Ամփոփել դասը, հանձնարարել տնային աշխատանք:	Սովորողները լսում և մասնակցում են դասի ամփոփմանը, նշում են տնային հանձնարարությունը:	